ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2025 թվականի N 186

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի 14 փետրվարի թիվ 02-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն 1, 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2025 թվականի N 187

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Լևոնի Բաբուրյանի կողմից 06.02.2025թ. ներկայացված 249 դիմումը, 20.11.2007թ. տրված թիվ 2483856 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, 12.09.2024թ, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ նոտարական ակտի կոդ 863-20240821-84-8256150 անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011TRRBDUS ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***.

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Անտառային 1 հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան 1-ին փողոց 17/6 ճաշարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2025 թվականի N 188

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Գ. ԱՐՄԱՆԻՍ ՀԱՍՑԵՈՎ 06-007-0734-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վալերիկ Ալեքսանի Ալեքսանյանի կողմից 06.02.2025թ. ներկայացված դիմումը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 060222M8ZDDZ ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***.

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Գ. Արմանիս հասցեով 06-007-0734-0002 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, Արմանիս 14-րդ փողոց 4 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2025 թվականի N 189

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.01.2025Թ. ԹԻՎ 89 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 17.01.2025թ. թիվ 89 որոշման 1-ին կետի ա ենթակետի կադաստրային ծածկագիրը փոխարինել հետևյալ ծածկագրով՝ 06-007-0401-0022:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, +374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2025 թվականի N 190

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լուսինե Վարդանյանի 2025 թվականի փետրվարի 03-ի հայտը,ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Ստեփանավան համայնքի ավագանու 24.12.2024թ. թիվ 131-Ն և 14 փետրվարի 2025 թվականի N 11 որոշումները՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Լուսինե Վարդանյանի հայտը և նրան տալ Բաղրամյան թիվ 22/3 հասցեի հպրակից՝ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքում ավտոմատ ինքնասպասարկող սարք /Սուրճի,ջրի,հյութերի և զովացուցիչ ըմպելիքների մեքենա/ տեղադրելու և վաճառք իրականացնելու թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը: Թույլտվությունը տրվում է մեկ ամիս ժամկետով, սակայն հաջորդ ամիսների համար տեղադրվող սարքավորումների քանակին համապատասխան տեղական վճարի վճարման անդորրագրի պատճենը ներկայացնելու դեպքում թույլտվությունը համարվում է երկարաձգված:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին վճարների գանձումները կատարել համաձայն Ստեփանավան համայնքի ավագանու 24.12.2024թ N 131-ն որոշման հավելվածի 15-րդ կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, +374 256 2 22 33, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2025 թվականի N 191

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 06-106-0133-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0,4 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 03.04.2024թ. 03042024-06-0076 սեփականության վկայականը, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.12.2024թ. թիվ 2/փ 519 դրական եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռու-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝ Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրի վարչական սահմանում գտնվող 06-106-0133-0008 կադաստրային ծածկագրի 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:
2. Նշված փոփոխություններն արտացոլել Ուրասար բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել

Ուրասար բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ